ՋՕՐԻ ԲԱԼԱՅԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Կրճատումներով ներկայացուող ելոյթը տեղի է ունեցել Սեպտեմբերի 3ին՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորների արտահերթ համագումարում,

Օգոստոսեան երեք հպարտ օրերը շատ բան փոխեցին երկրում եւ այս դահլիճում: Միայն իմ հայրենիքում՝ Լեռնային Ղարաբաղում, ոչինչ չփոխուեց: Շարունակում է հեղուել անմեղ մարդկանց արիւնը, զոհւում են երեխաներ ու ծերեր, չի երեւում յիրաւի անժամկէտ արտակարգ դրութեան վերջը: Թւում է մոռացութեան են մատնուել Լուկիանովի, Եանայեւի, Եազովի, Պուգոյի, Կրիւչկովի՝ մինչեւ վերջերս ամենակարող մարդկանց անունները, որոնք տնօրինում էին Ղարաբաղի ճակատագիրը: Սակայն շարունակւում է իրագործուել նրանց կողմից մշակուած «Օղակ» շարագոյժ գործողութիւնը, որի պատճառով վերջին երեք ամիսներին Ղարաբաղում զոհուել են հարիւրից աւելի մարդ, տեղահանուել են 24 հայկական գիւղեր:

Ես տեսել եմ սարսափազդու զինուորական գործողութեան հետեւանքները: Հին հայկական Բերդաձոր, Գետաշէն գիւղերը եւ տասնեակ ուրիշներ վերածուել են Սոնգմի եւ Խատինի: Առկայ է խռովութեան եւ ազգամիջեան հակամարտութիւնների միջեւ եղած սերտ կապը: Քանզի այն նոյն ուժերը, որոնք արգելքներ էին դնում ժողովրդավարութեան ճանապարհին, թոյլ չէին տալիս մարել ազգամիջեան հակամարտութիւնները: Այլ կերպ ինչպէ՞ս բացատրել Ղարաբաղեան հիմնահարցի ողբերգական մարաթոնը, նրա անփոփոխ ներկայութիւնը ԽՍՀՄ ժողովրդական պատգամաւորների բոլոր համագումարներում: Ինչո՞վ բացատրել այն փաստը, որ իշխանութեան բարձրագոյն մարմինների ընդունած եւ ոչ մի որոշում ցարդ չի կատարուել, որ շրջափակումը, հակառակ ընդունուած հրամանագրերին, որոշումներին, օրէնքներին, վերափոխուել է պաշարման: Այստեղ արդէն բարձրացուել է ինքնավար կազմաւորումների հարցը: Նախագահի եւ հանրապետութիւնների ղեկավարների յայտարարութեան մէջ ոչ մի խօսք չկայ ինքնավարութիւնների մասին: Ըստ երեւոյթին, ենթադրւում է, որ նրանք Միութենական պայմանագիրը կը ստորագրեն հանրապետութիւնների կազմում: Բայց դրա համար պահանջւում է նրանց իրաւունքների իրական երաշխիք եւ վերին աստիճանի վստահութիւն: Դատեցէք ինքներդ, կարո՞ղ է արդեօք Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութիւնը վստահել Ադրբեջանին՝ գիտենալով նրա նախագահի դիրքորոշումը, որը հանրապետութեան Գերագոյն Խորհրդի նստաշրջանում աներկմտօրէն արտայայտեց իր վերաբերմունքը ԽՍՀՄից դուրս գալու հարցում: «Անընդունելի է ԽՍՀՄի կազմից դուրս գալու հարց դնել, ասել է նա, քանի դեռ չեն յաղթահարուել տարածքային արգելքները՝ կապուած վերջերս արտայայտուած ՌԽՖՍՀի դիրքորոշման հետ: Մենք կոնֆեդերատիւ միութեան մէջ մտնելու համաձայնութիւն կը տանք, իսկ յետոյ ընթացքում մարտավարական նկատառումներով մշտապէս նորանոր պահանջներ կը ներկայացնենք»: Մեկնաբանութիւններն, ինչպէս ասում են, աւելորդ են: Եւ ապա, հանրապետութեան նախագահի խոստովանութիւնն այն մասին, թէ ի՞նչ կերպ է Ադրբեջանը պատրաստում իրագործել իր պահանջները ԼՂԻՄի նկատմամբ: Ահա թէ ինչ է նա ասել. «Ռուսաստանից ստացուող ծանրաքարշերի հիմքի վրայ մենք մեր զրահատեխնիկան ենք ստեղծում: Վերջերս մեր գործարանը 37 ծանրաքարշ վերասարքաւորեց զրահամեքենաների եւ կառավարութեան որոշմամբ դրանք յանձնեց հանրապետութեան ՆԳՆի տնօրինութեանը»: Իսկ ՆԳՆ նախարարը ուղղակի խորհրդարանի նստաշրջանում քաջաբար յայտարարել է. «Ղարաբաղը վերցնելը տեխնիկայի հարց է»: Նկատի է առնում իհարկէ զրահատեխնիկան: Եւ այստեղ կ'ուզենայինք դիմել Բորիս Նիկոլայեւիչին, ինչպէս նաեւ ռուսաստանցիներին. ժամանակը չէ՞ արդեօք Ադրբեջանի ղեկավարներին հարցնել, թէ ի՞նչ նպատակով են օգտագործւում ձեր ուղարկած ծանրաքարշերը: Չէ՞ որ մեր տարածքաշրջանում իսկական պատերազմ է ընթանում:

Ուրեմն. ահա, Ղարաբաղի ժողովուրդը չի ուզում եւ չի կարող տանել ուժից վեր ճնշումը: Ղարաբաղն իր ճակատագիրը, իր կողմնորոշումը վաղուց է կայացրել:

Ես ուզում եմ, որ բարձր համագումարը վերջապէս հասկանայ, որ քանի դեռ չի լուծուել Ղարաբաղի հիմնահարցը, անկարելի կը լինի փրկել մեր երկիրը: